ՎԱՀՐԱՄՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԵՎ ՋԱԼԱԼ ԷԴ-ԴԻՆԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

XII դ. վերջում և XIII դ. սկզբում Զաքարյան ավատական տան մի ճյուղը ներկայացնող Վահրամյաններին հաջողվեց ստեղծել Պատմական Հայաստանի Տավուշ, Գարդման, Շակաշեն և Փառիսոս գավառները մասամբ կամ ամբողջությամբ ընդգրկող հզոր իշխանություն՝ Գարդման, Սագիմ, Քարհերձ, Երգեվանք, Տերունական, Տավուշ, Կածարեթ, Քավաղին և Գագ բերդերով հանդերձ[1]*։ Վահրամյաններին էր պատկանում նաև առևտրատնտեսական ու ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Շամքոր քաղաքը։ Այն 1216/1217 թ. ազատագրեց իշխան Վահրամ Գագեցին՝ իր մերձավոր ազգական Իվանե աթաբեկի օգնությամբ*[2]*։ Դրա շնորհիվ Վահրամյանների վերահսկողության տակ անցավ Արդաբիլ—Պարտավ (Բարդա)—Գանձակ—Շամքոր—Տփխիս մայրուղու մի զգալի հատվածը։ Այդ ճանապարհը Ատրպատականը Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի հետ կապող ամենակարճ ուղին էր և ուներ առևտրական ու ռազմական մեծ նշանակություն։ Շամքորի ազատագրմամբ Զաքարյաններին նաև հաջողվեց գրեթե վերականգնել Բագրատունիների (որոնց ժառանգորդներն էին համարում իրենց) թագավորության հյուսիս-արևելյան սահմանները։ Դրանից հետո Գանձակի աթաբեկության հաշվին իրենց տիրույթներն ընդարձակելու Վահրամյանների քաղաքականությունը հետագա զարգացում չապրեց, քանի որ հակառակ դեպքում իրադարձություններին կմիջամտեր խորեզմշահ Մուհամմադը (1200—1220)։ Բանն այն է, որ ի վիճակի չլինելով դիմագրավել ներքին և արտաքին թշնամիների գնալով սաստկացող ճնշմանը, Գանձակի էլթկուզյան վերջին աթաբեկ Ուզբեկը*

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 163, 242—243, «Հաւաքումն պատմութեան Վրդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 144—145, «Մաղաքիա աբեղայի Պատմութիւն վասն ազգին Նետողաց», ի լոյս ընծ Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1870, էջ 5—8. «История и восхваления венценосцев», груз. текст перевел, предисловием и примечаниями снабдил проф. К. С. Кекелидзе, Тбилиси, 1954, с. 51, Шихаб аддин Мухаммад ан-Насиви, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкуберни, Баку, 1973, с. 226. «Հայկական սովետական հանրագիտարանում» (հ. III, Երևան, 1977, էջ 676) նշված է, թե «Զաքարեի որդու... Շահնշահի ժառանգ Վահրամի Աբուլ-Զաքարե (Բլուզ Զաքարե—Ա. Շ.) որդուց առաջացավ Վահրամյան-Գագեցի տոհմը»։ Իրականում Վահրամյանների տոհմի հիմնադիր Վահրամը Զաքարե Ա-ի որդին է՝ մեծ Սարգսի եղբայրը։ Այս հարցի մանրամասն քննությունը տե՛ս Ասլան Շահնազարյան, Զաքարյան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, դաղթը դեպի Զորագետ և նախորդները («Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 77), հմմտ. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 4, էջ 103։

2 Վահրամյանների իշխանություններ նվիրված մեր նախորդ հոդվածում հայկական աղբյուրների համադրմամբ եզրակացրել էինք, որ Շամքորը ազատագրվել է 1216/1219 թ. (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 4, էջ 108, ծան. 29)։ Շամքորի ազատագրման տարեթվի ճշգրտման գործում էական նպաստ է բերում Ջալալ էդ-Դինի անձնական քարտուղար ու պատմիչ ան-Նասիվին, որի հաղորդումների համաձայն Վահրամ Գագեցին Շամքորը կարող է ազատագրած լինել ոչ ուշ, քան 1217 թ. (ан-Насиви, с. 61).

(1210—1225), թույլ ու անկարող մի անձնավորություն, 1217 թ. ստիպված էր ընդունել Մուհամմադի գերիշխանությունը։ Դրա դիմաց խորեզմշահը մասնավորապես խոստանում է Ուզբեկին պաշտպանել վրացական պետության ոտնձգություններից։ Մուհամմադը Գանձակի աթաբեկությունը հայտարարում է սեփական (խաս) տիրույթ և դեսպան ուղարկում Վրաստան՝ վրաց արքունիքին այդ մասին տեղյակ պահելու համար։ Զրավարարվելով դրանով, Ուզբեկը խորեզմշահին խնդրում է արշավել վրացական պետության վրա։ Վերջինս որոշում է առիթն օգտագործել և այդ նպատակով իր հսկայական բանակից 50-հազարանոց ընտիր հեծյալ զորք է առանձնացնում։ Սակայն այդ արշավանքը խափանվում է, որովհետև Մուհամմադը ստիպված է լինում շարժվել դեպի Բաղդադ։ Ըստ երևույթին արշավանքի սպառնալիքը վրաց արքունիքին անհանգստություն էր պատճառել, որովհետև Մուհամմադի մոտ էր ուղարկվել թանկագին ընծաներով դեսպան, որը խորեզմշահին Գանձակի աթաբեկության սահմաններում չգտնելով և անգամ տեսնելով, որ նա Վրաստան արշավելու փոխարեն շարժվում է դեպի Բաղդադ, հետ չի դառնում և Մուհամմադին հասնում է նրա՝ Ջեյխունն անցնելուց հետո[3]։ Դրանից հետո շուրջ 5 տարի, մինչև մոնղոլների կողմից Մուհամմադի ջախջախումը, հայ-վրացական զորքերը Գանձակի աթաբեկության վրա այլևս ոչ մի հարձակում չգործեցին։ Հարձակումները վերսկսվեցին միայն 1222 թ., երբ հայ-վրացական զորքերը հասան Բայլական։

Սամբորի ազատագրմամբ Վահրամյանների իշխանությունը հասավ իր հզորացման գագաթնակետին թե՛ տարածքային, թե՛ ռազմական առումով։ Դրանով, ինչպես և իր՝ Վահրամ Գագեցու անձնական հատկանիշներով պետք է բացատրել Գեորգի Լաշայի (1207/1213—1222) օրոք վրաց արքունիքում նրա ունեցած մեծ ազդեցությունը։ «Վրաց ժամանակագրության» համաձայն, Վահրամ Գագեցին, որն ի դեպ վրաց արքունիքի մսախուրթ-ուխուցեսն էր (մի պաշտոն, որը նրան շնորհվել էր իբրև պատիվ), Իվանե աթաբեկի և մի քանի այլ իշխանների հետ միասին անգամ ընդվզում է Գեորգի Լաշայի դեմ՝ դժգոհելով նրա թեթևաբարո վարքագծից։ Վրաց պատմիչի վկայությամբ, «Վրաստանի իշխանները, հույժ տխրած, հատկապես Իվանե աթաբեկն ու Զաքարիայի որդի Վահրամ Գագեցին, հրաժարվեցին արքունիքում գտնվելուց։ «Գլուխ չենք տա,— ասացին նրանք — քո թագավոր լինելուն, եթե չբաժանվես չարագործ մարդկանց մտերմությունից և վատ սովորությունից, ինչ անում ես»։ Թագավորը զղջաց և երդմամբ խոստացավ՝ ոչինչ չանել առանց նրանց խորհրդի»[4]։ Այս իրադարձությունը, որ ակադ. Մ. Բրոսսեն թվագրում է 1220-ում[5], միաժամանակ վկայում է վրաց Բագրատունիների կենտրոնական իշխանության զգալի թուլացման մասին։

Զաքարյան ավատական տան մյուս երկու ավագ ճյուղերի նման Վահ-

[3] ан-Насиви, с. 61.

[4] «Վրաց ժամանակագրություն (1207—1318)», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 48։

[5] M. Brosset, l'Histoire de la Georgie, t. I. 2, St.—Petersbourg, 1851, p. 92, n. 2. Եթե Ստեփաննոս եպիսկոպոսի այն հաղորդումը, որ Գեորգի Լաշայի որդի Դավիթը ծնվել է 1216 թ. («Մաղ ժամանակագրություններ», հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 38) ճիշտ է, ապա Մ. Բրոսսեի թվագրումը սրբագրելի է, քանի որ համաձայն «Վրաց ժամանակագրության» (էջ 48—49) Գեորգի Լաշան ամուսնացել է այս իրադարձությունից հետո։

*բամյաններին էին ենթարկվում որոշ մասը իշխանություններ։ Այդ մասին արժանահավատ տեղեկություններ են հաղորդում Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին, խոսելով մոնղոլների կողմից Վահրամ Գագեցու տիրույթների գրավման և ապա դրանք նրան վերադարձնելու հետ կապված իրադարձությունների մասին։ Նրանցից առաջինը գրում է. որ մոնղոլները «յարձակեցան ի վերայ... բերդիցն՝ որ ընդ իշխանութեամբն Վահրամայ, ի Տէրունականն, և ի յերգեվանքն, և ի Մածնաբերդ, զոր ունէր Կիւրիկէ Բազրատունի, որդի Աղուարբանայ... Բայց այնոքիկ, որ առին զՇամքոր, եկին... ի Տաւուշ, ի Կածարէթ և ի Նոր բերդն և ի Գագ...»[6]։ Իսկ Վարդան Արևելցին, նկարագրելով մոնղոլների կողմից Վահրամ Գագեցու տիրույթները նրան վերադարձնելը, գրում է. «ապա եկեալ (Վահրամ Գագեցին— Ա. Շ.) առնոյր զառեալն ի նոցանէ զդղեակս և զգաւառն՝ որ սեփական լեալ էր նոցա ի հայրենեաց. որ և զամենայն առեալ էին, զՏաւուշ, զԿածարէթ, զՏերունականն, զերգևանքն, զՄածնաբերդ՝ որ էր Կիւրիկեանց Ասխարբանայ. զնոր բերդ՝ որ էր Վասակայ թագաւորազնին. և զՔաւազինն անմարտնչելի ամրոց, և զԳագ անուանի բերդ»[7]։ Այսպիսով, վերը բերված սկզբնաղբյուրները հավաստում են, որ Նոր Բերդի և Մածնաբերդի Կյուրիկյան իշխանությունները ենթարկվում էին Վահրամ Գագեցուն[8]։ Դժվար է որոշակի ասել, թե մեկական բերդերում և դրանց շուրջն ընկած ոչ մեծ տիրույթներում ամփոփված այս մանր իշխանությունները ե՞րբ են անցել Վահրամյանների գերիշխանության տակ։ Միայն հայտնի է, որ Զաքարյանները հյուսիս-արևելյան Հայաստանի բազմաթիվ շրջաններ սելջուկյան լծից ազատագրել են 1190—1210-ական թվականներին։ Ընդ որում, Թեժառույքի՝ Իվանե աթաբեկի 1196—1199-ով թվագրվող վրացերեն շինարարական արձանագրությունը հավաստում է, որ նա Գետաբակը «Կեչառեցիների երկրի» և Նոր Բերդի հետ միասին նվաճել է 1190-ական թվականներին։ Չնայած աղբյուրագիտական ուղղակի տվյալների բացակայությանը, պնդելի է, որ Մածնաբերդը ևս նա է ազատագրել սելջուկյան լծից և XIII դ. սկզբներին Նոր Բերդի հետ միասին հանձնել Վահրամյաններին՝ ի տիրապետություն։ Նկատենք նաև, որ Վահրամյանների իշխանության հոգևոր կենտրոնն էր Նոր Բերդի Կյուրիկյան իշխանության տարածքում գտնվող Նոր Վարագ վանքը[10]։

Վահրամյանների իշխանության մասին մեր ունեցած հետագա տեղեկությունները վերաբերում են մոնղոլների հետախուզական արշավանքի շրջանին։ Մոնղոլներն առաջին անգամ Անդրկովկասում երևացին 1220 թ. վեր-

---

6 Կիրակոս Գանձակեցի, էջ 242—243 (այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Ա. Շ.)։

7 Վարդան Արևելցի, էջ 145։ Ռ. Մաթևոսյանը հակված է ընդունելու Վարդան Արևելցու վկայությունը, ըստ որի խնդրո առարկա ժամանակաշրջանում Մածնաբերդում իշխում էր Աղսարթաներ (Ռ. Ի. Մաթևոսյան, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 207)։

8 Չնայած Զաքարյան իշխանապետության պատմության լուսաբանմանը նվիրված մի շարք ուսումնասիրություններում նշվել է, որ Վահրամյաններից վասալական կախման մեջ էին գտնվում որոշ իշխանություններ, այդուհանդերձ կոնկրետ չի ասվել, թե որոնք էին դրանք։ Մածնաբերդի և Նոր Բերդի Կյուրիկյան իշխանությունների պատմությամբ զբաղվողները ևս չեն նշել, թե ում էին ենթարկվում դրանք։

9 Պարույր Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 119։

10 Կիրակոս Գանձակեցի, էջ 153։

ին։ Նրանց 20-հազարանոց զորաբանակի[11] արշավանքը ղեկավարում էին Ջեբե Նոյինը և Սուբադայ բահատուրը։ Այս արշավանքի նպատակների և ընթացքի սպառիչ քննությունը դիտելով մեր նպատակից դուրս[12], համառոտակի նշենք միայն, որ Նախիջևանի մոտով Արաքսն անցնելուց հետո մոնղոլներն ընդհարվում են 10-հազարանոց հայ-վրացական զորաբանակի հետ և նրան պարտության մատնելուց հետո մտնում Անդրկովկաս։

Տեսնելով, որ գործ ունեն ահեղ թշնամու հետ, Գեորգի Լաշան, աթաբեկ Ուզբեկը և Խլաթի ու Ջազիրի կառավարիչ ալ-Մալիք ալ-Աշրաֆը փորձում են համաձայնության գալ և համատեղ հետ մղել մոնղոլներին[13]։ Գեորգի Լաշան և Ուզբեկը ժամանակավորապես մի կողմ դնելով թշնամությունը, դաշինք են կնքում և որոշում ընդհանուր թշնամու դեմ հանդես գալ 1221 թ. գարնանը[14], հավանաբար, կարծելով, թե մոնղոլները ձմեռային պայմաններում գործողությունների չեն դիմի։ Սակայն վերջիններս նախահարձակ են լինում և 1221 թ. սկզբին ներխուժում վրացական պետության սահմանները։ Ընդ որում, մոնղոլներին էր միացել նաև Ուզբեկի մամլյուկ վասալներից Նասիր ադ-Դին Ակ-Կուշը՝ թուրքերից ու քրդերից կազմված իր հրոսակախմբով[15], «ի սահմանս Շամքոր քաղաքի»[16] բանակած մոնղոլական հեծյալ զորքը վրացական թագավորության սահմանները կարող էր ներխուժել (այն էլ ձմռանը) միայն հարթավայրային շրջանով, այն է՝ Կուրի աջակողմյան դաշտավայրով, որտեղով անցնում էր Շամքոր-Տփխիս ճանապարհը։ Իսկ ինչպես արդեն նշվել է, այդ ճանապարհի մի զգալի հատվածն անցնում էր Վահրամյանների իշխանության տարածքով, այն էլ նրա ամենախտաբնակ կենտրոնական մասով։ Եվ իսկապես, ինչպես նշում է վրաց պատմիչը, մոնղոլները «հասան Վրաստանի սահմաններին, սկսեցին ասպատակել Բագի երկիրը»[17]։ Նույնն է հաղորդում Վարդան Արևելցին, գրելով. «եկին (մոնղոլները— Ա. Շ.) մտին յերկիրն Տուգարացւոց առ դաշտաւայրօքն, ի կողմանցն Աղուանից, իբրև թէ քսան հազար. և կոտորէին զամենայն կենդանի՝ զորս գտանէին»[18]։ Վերոգրյալից պարզ է դառնում, որ մոնղոլները վրացական թագավորություն ներխուժեցին Վահրամյանների իշխանության տարածքով։ Վահրամ Գագեցին

---

11 «Վրաց ժամանակագրություն»-ում մոնղոլական զորաբանակի թիվը հաշվում է 12 հազար (էջ 55), որ ճիշտ չէ և այլ աղբյուրներով չի հաստատվում։

12 Անդրկովկասում մոնղոլների մղած ռազմական գործողությունների հետ կապված որոշ հարցեր, չնայած դրանց քննությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների առկայությանը, դեռևս կարոտ են սպառիչ հետազոտության կամ էլ վերանայելի են։ Դա մեծ մասամբ պայմանավորված է այն իրողությամբ, որ ժամանակի աղբյուրները (թե՛ հայ-վրացական և թե պարսկա-արաբական) այդ իրադարձությունների գրեթե բոլոր կարևոր դրվագների մասին կա՛մ իրարամերժ տեղեկություններ են հաղորդում, կամ էլ այս կամ այն կարևոր դեպքի մասին զարմանալիորեն լռում են։

13 «Материалы по истории Азербайджана из Тарых-ал-Камиль Ибн ал-Асира», Баку, 1940, с. 137, Рашид ад-Дин Сборник летописей, т. I, кн. II, М.—Л., 1952, с. 226.

14 Ибн ал-Асир, с. 137—138.

15 Նույն տեղում։

16 Կիրակոս Գանձակեցի, էջ 202։

17 «Վրաց ժամանակագրություն», էջ 55։

18 Վարդան Արևելցի, էջ 142։

որի իշխանությունը վրացական թագավորության 7 սահմանապահ կուսակալություններից մեկն էր, պարտավոր էր հետ մղել թշնամուն և դրանով իսկ խանգարել նրա ներթափանցումը երկրի խորքը։ Սակայն, ինչպես արդեն տեսանք, դա նրան չէր հաջողվել, որովհետև մոնղոլներն անգամ հասել էին «յերկիրն Գուգարացւոց»։ Զկալով, որ ի զորու չէ սեփական ուժերով հետ շպրտել մոնղոլներին, որոնք իր իշխանությունում «կոտորէին զամենայն կենդանի՝ զորս գտանէին», Վահրամ Գագեցին Իվանե աթաբեկի հետ միասին Գեորգի Լաշային տեղյակ է պահում «Սոմխեթն ավերելու եկած անծանոթ լեզվով խոսող օտար ցեղերի մասին»[19]։ Լսելով մոնղոլական ներխուժման մասին, Գեորգի Լաշան «գումարեց իննսուն հազար զորք, և ուղևորվեցին Գագի սահմանագլխին գտնվող թաթարների (մոնղոլների— Ա. Շ.) կողմը։ Այն կողմից մեծ զորքով միացան Իվանե աթաբեկն ու եղբորորդին՝ ամիրսպասալար Զաքարիայի որդի Շանշեն (Շահնշահը—Ա. Շ.) և մսախուրթ-ուխուցես Վահրամ Գագեցին, և ուղևորվեցին»[20]։ Վարդան Արևելցու հաղորդումներից հրևում է, որ, հավանաբար, լսելով հայ-վրացական զորքերի մոտենալու մասին, մոնղոլները «... փութով դառնային։ Զորոց հետ մտեալ ամենայն ուժով Լաշն՝ (Գեորգի Լաշան—Ա. Շ.) հասանէ...»[21]։ Զարմանալի է, բայց փաստ է, որ ըստ հայկական աղբյուրների և «Վրաց ժամանակագրության», հայ-վրացական և մոնղոլական զորքերի միջև տեղի է ունեցել միայն մեկ ճակատամարտ, այն էլ տարբեր տեղերում։ Այսպես, օրինակ, Ստեփաննոս եպիսկոպոսն իր «Տարեգրության» մեջ մոնղոլների այս արշավանքի մասին հիշատակում է երկու անգամ։ Առաջին անգամ նա գրում է. «ՌՃԲ (1203) թուին Ջաբա, Սաբա բահատուրն եկն ի տփխեաց [տու]ն, զՍախոտէ աւիրեաց և դարձավ։ Զորն վրաց ի հետ գնաց և ի Կոտմանա կոտորեաց և բարձոյ[ց]»[22]։ Երկրորդ անգամ նա հաղորդում է. «ՌԿԹ (1220) թուին... զթաթարն (մոնղոլները— Ա. Շ.) վրացին կոտորեաց ի Կոոմանա (Կոտմանա— Ա. Շ.) ջրին»[23]։ Այսպի-

---

19 «Վրաց ժամանակագրություն», էջ 55։

20 Նույն տեղում, էջ 55—56։

21 Վարդան Արևելցի, էջ 142։

22 «Մեր ժամանակագրություններ», հ. I, էջ 37։ Վ. Հակոբյանի կարծիքով «Սախոտենա հավանաբար Տփխիսից հարավ-արևմուտք գտնվող Սախաթն բերդն է (նույն տեղում, էջ 53, ծան. 14), որ մեր կարծիքով ճիշտ է։

23 Նույն տեղում, էջ 38։ Այս վկայություններից առաջինի մասին Վ. Հակոբյանը գրել է. «սույն վկայությունը, անկասկած, չի վերաբերում դեպի Անդրկովկաս Սուբութայի և Ջեբեյի գլխավորած մոնղոլների առաջին արշավանքին, այլ ինչ որ եղելությունների արձագանք են, որոնց մասին մեզ առայժմ ուրիշ բան հայտնի չէ» (նույն տեղում, էջ 53, ծան. 14)։ Նմանատիպ եզրակացությունն կովան կարող է լինել միայն վկայության ՌՃԲ (1203) թվագրումը, որովհետև խնդրո առարկա արշավանքը տեղի է ունեցել 1220—1223 թթ.։ Սակայն նկատենք, որ Մխիթար Այրիվանեցին և Գրիգոր Ականացին ևս այս արշավանքը թվագրում են ոչ թե 1220-ով, այլ համապատասխանաբար 1211—1221-ով և 1214-ով («Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ելած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 80, Մաղաքիա աբեղա, էջ 6)։ Ի դեպ, Ք. Պատկանյանը Գրիգոր Ականացու մոտ հանդիպող ՌԿԳ (1214) թվականը հարկ է համարում սրբագրել ՌԿԹ (1220), («История монголов инока Магакия, XIII века», перевод и объяснения К. П. Патканова, СПб., 1871, с. 64, пр. 8)։ Ամենայն հավանականությամբ Ստեփաննոս եպիսկոպոսն օգտվել է մոնղոլների հետախուզական արշավանքն արձանագրող երկու տարբեր աղբյուրներից և դրանք անաղարտ մուծել իր «Տարեգրության» մեջ։

սով, Ստեփաննոս եպիսկոպոսը հիշատակում է միայն մեկ ճակատամարտ, այն էլ Կոտմանում։ Նույնն են հաղորդում նաև Անանուն Սեբաստացին, Վարդան Արևելցին, Գրիգոր Ականացին և Մխիթար Այրիվանեցին[24]։ Կիրակոս Գանձակեցին ու «Վրաց ժամանակագրությունը» ևս հիշատակում են միայն մեկ ճակատամարտ։ Սակայն նրանցից առաջինը ճակատամարտի վայրը տեղագրում է Խունանի (=Հունարակերտ) դաշտավայրում, իսկ երկրորդը՝ «Բերդուջի, որ այժմ Սագիմ է կոչվում գետափին»[25]։ Հայ-վրացական աղբյուրներում նկատվող այս հակասությունը հաջողվել է հարթել Լ. Բաբայանին։ Վերոհիշյալ աղբյուրները պարսկա-արաբականի հետ համադրելու ճանապարհով նրան հաջողվել է պարզել, որ մոնղոլների հետախուզական արշավանքի ժամանակ հայ-վրացական և մոնղոլական զորքերի միջև տեղի է ունեցել 3 ճակատամարտ. առաջինը մոնղոլների՝ Արաքսն անցնելուց հետո, երկրորդը՝ Կոտմանի դաշտում՝ Տերունական բերդի մոտ, իսկ երրորդը՝ Խունանի դաշտավայրում[26]։

Տերունական բերդի և Կոտման գետի ու դաշտի տեղադրության մասին մեկ դարից ավել է, ինչ կովկասագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվում։ Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ վերը նշված ճակատամարտերից վերջին երկուսը նույնացվելու հետևանքով հետազոտողները ստիպված են եղել հաշտեցնել աղբյուրների իրարամերժ տեղեկությունները՝ առանց դրանք համեմատական քննության ենթարկելու։ Մ. Էմինը, օրինակ, Տերունականը տեղադրել է «Շամբոր քաղաքի սահմաններում», Հ. Հյուբշմանը՝ «Յուտի»-[28], իսկ Ղ. Ալիշանը՝ մեկ «մերձ Աղստև գավառ Ուտիոյ», մեկ՝ Արցախում[29]։ Ք. Պատկանյանը սկզբում Կոտմանը և Սագիմը դիտել է տարբեր գետեր և կարծել, թե Կոտմանը գուցե և Գուրան-չայն է[30]։ Երկու տարի անց նա վերանայել է իր կարծիքը և գրել. «Մաղաքիայի մոտ հանդիպող Սագիմն ամենայն հավանականությամբ այժմյան Ջագամն է...։ Կոտմանը եթե նույն Ջագամը չէ, ապա մեկն է Շամքորից արևմուտք՝ աջ կողմից Կուրը թափվող գետակներից»[31]։ Վախուշտին Սագիմ գետը նույնացրել է Աղստևի հետ[32]։ Դա ճիշտ չէ թեկուզ այն պատճառով, որ խնդրո առարկա ճակատամարտը տեղի է ունեցել Վահրամյանների տիրույթներում, մինչդեռ Աղստևի շրջանը պատկանում էր Իվանե աթաբեկին։ Մ. Բարխուտարյանցը Տավուշ գետի ափին, այժմյան Ադրբեջանական ՍՍՀ Թովուզի շրջանի Օքսուզլու գյու-

---

24 «Մեր ժամանակագրություններ», հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 137, Վարդան Արևելցի, էջ 142, Մաղաքիա աբեղա, էջ 5—6, Մխիթար Այրիվանեցի, էջ 80։

25 Կիրակոս Գանձակեցի, էջ 203, «Վրաց Ժամանակագրություն», էջ 56։

26 Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, էջ 166—180։

27 «Всеобщая история Вардана Великого», перевел Н. Эмин с примечаниями и приложениями, М., 1861, с. 158, пр. 593.

28 Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղվոց անունները, Վիեննա, 1907, էջ 413։

29 Վարդան Արևելցի, էջ 145, ծան. 4, Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 455, ծան. 1։

30 «История монголов инока Магакии, XIII века», с. 64, пр. 8.

31 «История монголов по армянским источникам», перевод и объяснения К. П. Патканова, СПб., 1873, с. 70, пр. 3.

32 „ქართლის ცხოვრება", ტ. IV, თბ., 1973, გვ. 306.

ղի մոտ գտնվող բերդատեղի «Դրոկյան» անվանումը միայն հիմք ընդունելով, այն նույնացրել է Տերունականի հետ[33]։ Այս եզրահանգումը ևս անընդունելի է։ Նախ, «Դրոկյանի» խիստ կտրտված շրջակա տեղանքն իսպառ բացառում է թվով մի քանի տասնյակ հազարի հասնող (այն էլ հեծյալ) զորքերի հակատամարտի հնարավորությունն այնտեղ։ Երկրորդ, «Դրոկյանը» Տերունականը համարելով՝ պիտի ընդունենք, որ Տավուշը Կոտմանն է, այն դեպքում, երբ հայ մատենագրության մեջ Տավուշը երբեք Կոտման չի կոչվել։ Հետևելով Մ. Բարխուտարյանցին, ակադ. Հ. Մանանդյանը գրել է. «Այս Կոտման գետը ո՛չ թե Ջևանշիր գավառի հյուսիսակողմում գտնվող Գուրան չայն է, ինչպես այդ ենթադրել են Բրոսսեն և Պատկանյանը (նկատի ունի վերջինիս սկզբնական ենթադրությունը— Ա. Շ.), այլ հավանորեն այժմյան Թոուզ (Տավուշ— Ա. Շ.) գետն է, որի ձախ կողմում Օքսուզլու գյուղի մոտ գտնվում էր, Մ. Բարխուտարյանցի կարծիքով, Տերունական բերդը»[34]։ Ռ. Ջավախիշվիլին 1923 թ. հրատարակած Վրաստանի պատմական քարտեզում Սագիմը (= Բերդուջ) նույնացրել է Դեբեդ գետի հետ, հավանաբար, ելնելով Վախուշտիի այն հաղորդումից, որ Բերդուջը հայտնի է նաև Դեբեդ անվամբ[35]։ Հակադրվելով նրան, Լ. Մելիքսեթ-Բեկը գրել է. «Սագիմը թերևս այժմյան Ջեգամ գետն է... և ոչ թե Դեբեդն (Դեբեդա-չայն) ինչպես մինչև այժմ կարծում էին»[36]։ Ստեփաննոս եպիսկոպոսի «Տարեգրության» հրապարակման առթիվ Վ. Հակոբյանը ևս անդրադարձել է Կոտմանի տեղադրության հարցին։ Ընդորում, արդեն տեսանք, նա վրիպել է, Ստեփաննոս եպիսկոպոսի կողմից մոնղոլների հետախուզական արշավանքի մասին 1203 թ. տակ դրված հիշատակությունը համարելով «այլ եղելությունների արձագանք»։ Հենց դա է պատճառը, որ նա Կոտմանն ու Կոռմանա ջուրը համարել է տարբեր գետեր ու համապատասխանաբար ծանոթագրել. «պատմական Կոտմանը գտնվում է այժմյան Նոյեմբերյանի շրջանում և կոչվում է Ինճա-չայ (Բարակ գետ)», «բնագրի Կոռմանա ջուրը, ենթադրում ենք, որ պետք է լինի Կուրակ-չայը»[37]։

«Հայաստանի բերդերը» սխալաշատ աշխատության մեջ Մ. Հովհաննիսյանը Տերունականը մե՛կ տեղադրում է Տավուշի ափին, մե՛կ Աղստևի[38]։ Վրաց հետազոտող Ն. Շոշիաշվիլին, Կոտմանի և Խունանի ճակատամարտերը նույնացնելով հանդերձ, գրել է. «Բերդուջը, Սագիմը և Կոտմանը, եղել են միևնույն գետի անունները, հնարավոր է տարբեր ժամանակներում...։ Ինչպես երևում է, այստեղից էլ մոտիկ է եղել Խունանը, որի պատճառով էլ այս

33 Մ. Բարխուտարյանց. Արցախ. Բաղու, 1895, էջ 358—359։

34 Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 183—184։ Հ. Մանանդյանը շփոթել է, Մ. Բրոսսեին վերագրելով նման կարծիք։ Վերջինս Հ. Մանանդյանի նշած աղբյուրում շատ որոշակի գրում է. «Կիրակոսը... այս ճակատամարտը տեղադրում է Խունանում՝ Թիֆլիսի հարավում, մինչդեռ Կոտմանը գտնվում է Մցխեթի հյուսիսում» («Histoire chronologique par Mkhithar d' Airivank, XIII-e s» traduite de l' armenien M. Brosset («Memoires de l.' Acad. imp. des sciences de St.—Petersbourg», VII-e ser., t. XIII, № 5, St.—Petersbourg, 1869, p. 105).

35 «ქართლის ცხოვრება», ტ. IV, გვ. 306.

36 Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 63, ծան. 1։

37 «Մատեն ժամանակագրություններ», հ. I, էջ 52, ծան. 14, էջ 55, ծան. 28։

38 Միսայել Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 580։

գաշտը կոչում էին Խունանի դաշտ»[39]։ Կոտմանի և Խունանի տեղադրության քոլորովին այլ վարկած է առաջադրում Վրաստանի պատմական աշխարհագրության հարցերով զբաղվող Դ. Մուսխելիշվիլին։ Նա ճգնում է ապացուցել, որ Խունան (=Հունարակերտ) բերդաքաղաքը գտնվել է ոչ թե Խրամի և Կուրի գետախառնուրդում, ինչն արձանագրում են նաև վրացական աղբյուրները (Վախուշտի, Սեխնիա Չխեիձե), այլ Տավուշ գետի ստորին հոսանքի շրջանում, հնարավոր համարելով այն նույնացնել Կըրղն գյուղի մոտակայքում գտնվող Իուփրախ-Կալա հնավայրի հետ[40]։ Բացի այդ, նա ձգտում է ընթերցողին համոզել, թե Կոտմանի դաշտավայրը, որի մոտ գտնվում էր Տերունականը, Խունանի դաշտավայրն է։ Իր այս նպատակադիր վարկածը հիմնավորելու համար Դ. Մուսխելիշվիլին հենվում է երկու հիմնական կովանների վրա։ Դրանցից առաջինը Կոտմանի և Խունանի ճակատամարտերի անընդունելի նույնացումն է, իսկ մյուսը՝ Տերունականի տեղադրության մասին Մ. Բարխուտարյանցի արդեն հերքված ենթադրությունը։ Ելնելով այս դիմնագուրկ կովաններից, Դ. Մուսխելիշվիլին գրում է. «պարզվում է, որ պատմական աղբյուրների Կոտմանը այժմյան Թովուզ-չայն (Տավուշը— Ա. Շ.) է, որը հոսում է Ջեգամ-չայից արևմուտք, նրան զուգահեռ։ Կոտմանի դաշտավայրն էլ, այսինքն Խունանի դաշտավայրը, պետք է լինի այդ գետերի ստորին հոսանքի ցածրավայրը, որտեղ Կուրի ափին գտնվել է Խունանը (Հունարակերտը)»։ Նման անտրամաբանական եզրակացության հանգելիս Դ. Մուսխելիշվիլին անտեսում է մի քանի հանգամանք։ Նախ, հայկական աղբյուրները որոշակիորեն տարբերում են Խունանի և Կոտմանի դաշտավայրերը և, հետևաբար, դրանք չի կարելի նույնացնել։ Երկրորդ, եթե ընդունենք Խունանի (=Հունարակերտ)՝ Դ. Մուսխելիշվիլու առաջարկած տեղադրությունը, ապա Վահրամյաններին ի տիրապետություն կհանձնենք մի բերդաքաղաք, որը ինչպես վրացական, այնպես էլ հայկական աղբյուրների միահամուռ վկայությամբ երբեք նրանց չի պատկանել։ Մինչդեռ, նկարագրելով Կոտմանի ճակատամարտը, Վարդան Արևելցին միանգամայն որոշակի նշում է, որ այն տեղի է ունեցել Վահրամ Գագեցու տիրույթներում[42]։ Եվ վերջապես, Դ. Մուսխելիշվիլու խոսքերով ասած, «հին Աղվանքի պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար շատ բան արած»[43] Մ. Բարխուտարյանցն իր նույն «Արցախ» աշխատության 398—399 էջերում Հունարակերտը տեղադրում է «Կուր և Խրամ գետերի մեջ», մի բան, որը փորձում է վիճարկել Դ. Մուսխելիշվիլին։ Նկատենք նաև, որ այնպիսի հեղինակավոր հրատարակություն, ինչպիսին է «Վրաստանի պատմության ակնարկները», գտնում է, որ մոնղոլներն իրենց հետախուզական արշավանքի ժամանակ

[39] გრიგორ აკანელი, მოისართა ტომის ისტორია, გამოსცა ნ. ბიოშიაშვილმ, თბ., 1961, გვ. 92-93, *Հմմտ. Գևորգ Ալթունյան, Մոնղոլները և նրանց արշավանքները, Վաղարշապատ, 1913, էջ 17։*

[40] Д. Л. Мусхелишвили, К вопросу о локализации Хунана (Хнаракерта), («Археологические памятники феодальной Грузии», т. II, Тбилиси, 1974, с. 275—277). Мусхелишвили Давид Левонович, Историческая география древней Грузии (с древнейших времен до VI в. н. э.), (автореферат докторской диссертации, Тбилиси, 1979, с. 35).

[41] «Археологические памятники феодальной Грузии», т. II, с. 276—277.

[42] *Վարդան Արևելցի, էջ 142։*

[43] «Археологические памятники феодальной Грузии», т. II, с. 276.

վրացական զորքերի հետ բախվել են հրեք՝անգամ[44] և ոչ թե մեկ, ինչպես փորձում է ներկայացնել Դ. Մուսխելիշվիլին։ Ի դեպ, այդ գրքի «Վրացական պետությունը XIII դարի սկզբին» ներդիր քարտեզի համաձայն Հունարակերտը գտնվելիս է եղել Խրամի և Կուրի գետախառնուրդում, որը միանգամայն ճիշտ է և անհերքելի։

Վերջերս Կոտմանի տեղադրությանն անդրադարձել է նաև Զ. Բունիյաթովը։ Իր «Ադրբեջանի աթաբեկների պետությունը» տենդենցիոզ և կեղծիքներով լեցուն գրքում, մերժելով Ա. Գալստյանի այն ենթադրությունը, թե Կոտմանն այժմյան Տավուշն է[45], նա այն մերկապարանոց հայտարարությունն է անում, որ իբր թե «Կոտմանի դաշտը, Կոտման գետը ոչ այլ ինչ է, եթե ոչ Գարդմանի աղավաղված անվանումը։ Գարդման գետը Շամքոր-չայի, որը թափվում է Կուր գետը, աջ վտակն է»[46], նման եզրահանգումը, բացի հայերենի հնչյունափոխության տարրական օրենքների մասին Զ. Բունիյաթովի անտեղյակությունից, վկայում է, որ նա բացարձակապես անծանոթ է ժամանակի հայկական աղբյուրներին։ Բանն այն է, որ համաձայն Գրիգոր Ականացու և Վարդան Արևելցու հավաստի հաղորդումների, Վահրամ Գագեցին մոնղոլներին մինչև երեկո կոտորելով ու հետապնդելով է հասել Գարդման[47], ուր գտնվում է Գարդման գետը, որը Զ. Բունիյաթովը նույնացնում է Կոտմանի հետ։

Ի վերջո, ո՞րն է Կոտման գետը։ Այս հարցի լուծման բանալին, մեզ թվում է, Գրիգոր Ականացու հաղորդումն է այն մասին, որ խնդրո առարկա ճակատամարտը տեղի է ունեցել «ի դաշտն մեծ, որ կոչի Կոտման, որ կայ առաջի Տերունական բերդին», և որ Վահրամ Գագեցու հարձակման հետևանքով «լցաւ դաշտն Սագամայ կոտորեալ Տաթարով»[48]։ Արդեն տեսանք, որ Ք. Պատկանյանը հանգել էր այն մտքին, թե Սագիմն ամենայն հավանականությամբ այժմյան Զագամն է, իսկ Կոտմանը եթե նույն Զագամը չէ, ապա մեկն է Շամքորից արևմուտք՝ աջ կողմից Կուրը թափվող գետակներից։ Նկատենք, որ արդեն XIII դ. Սագիմը հայտնի էր նաև Զակամ (=Զագամ) անվամբ։ Այսպես, Վարդան Արևելցուն վերագրված XIII դ. «Աշխարհացույցում» կարդում ենք. «Եւ բազում գաւառք ի կողմն հիւսիսոյ, որ կոչի Զակամ, ուր կայ սուրբ Խորանաշատ...»[49]։ Հետևաբար, Սագիմ=Զակամ=Զագամ համարժեքությունը կասկածից վեր է։ Մյուս կողմից, ինչպես նշվեց, Տավուշ=Կոտման նույնացումը միանգամայն անընդունելի է։ Վերոհիշյալի հաշվառմամբ պետք է ընդունենք Կոտման=Սագիմ (=Զագամ) նույնացումը, քանի որ Սագիմից արևմուտք՝ դեպի Կուր հոսող առաջին գետը Տավուշն է, իսկ արևելքից առաջինը՝ Շամքորը։ Հետևաբար, հետազոտողներից Կոտմանի տեղադրության հարցին առավել ճիշտ են մոտեցել Ք. Պատկանյանը և Ն. Շո-

---

44 „საქართველოს ისტორიის ნარკვევები". ტ. III. თბ., 1979, გვ. 536.

45 «Армянские источники о монголах», перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, М., 1963, с. 114, пр. 81, *հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 601։*

46 З. М. Буниятов, Государство атабеков Азербайджана (1136—1225), Баку, 1979, с. 115, пр. 9.

47 *Մաղաքիա արքեղա, էջ 6, Վարդան Արևելցի, էջ 142։*

48 *Մաղաքիա արքեղա, էջ 5, 6։*

49 *«Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատարակություն Հայկ Պերպերյանի, Փարիզ, 1960, էջ 17։*

շիաշվիլին։ «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակի III հատորի «Հայաստանը և հարևան երկրները 855—953 թթ.» ներդիր քարտեզում Տերունականը Սադիմ (Զակամ, Զագամ) գետի ափին է տեղադրում նաև ակադ. Ս. Երեմյանը։

Ժամանակի աղբյուրներից Կոտմանի ճակատամարտն առավել մանրամասն է նկարագրել Գրիգոր Ականացին։ Ահա այդ նկարագրությունն ամբողջությամբ. «և առեալ կորովի և մեծ իշխանն Վարհամ զաջոյ թևն, և Իվանէ զձախոյ, և յորժամ արձակեցան ի միմեանս այս ոճիրս գործեցաւ, որ գրեցաւ ի ձեռն անիծելոյն Համիդօլայ։ Իսկ յորժամ ետես ազգն Նետողաց զայսպիսի երկրապառակութիւն ի նոսա, յայնժամ զօրացեալ արձակեցան ի վերայ վրաց հեծելոյն, և յանխնայ կոտորեցին զնոսա։ Իսկ մեծ իշխանն Վարհամ, տէրն Գագայ, առեալ զաջոյ թևն, և մինչ յերեկոյն գնաց կոտորելով զՏաթարն յանխնայ յարձակմամբ. մինչև առհասարակ լցաւ դաշտն Սադամայ կոտորեալ Տաթարով. և ինքն Վարհամ իշխանն Գագայ իբրև լուաւ զկոտորումն զօրաց թագաւորութեան, յայնժամ մեծապէս տրտմեալ և թողեալ զգործ պատերազմին՝ դարձաւ յամուրս բերդին իւրոյ, որ կոչի Քարհերձ»[50]։ Ճակատամարտին Վահրամ Գագեցու և նրա զորքի մասնակցությունը նույն կերպ է նկարագրում Վարդան Արևելցին. «Վահրամ տէր երկրին,— գրում է նա,— մեծաւ քաջութեամբ գնաց հանդէպ երեսացն սաստիկ կոտորմամբ՝ մինչև ցԳարդման, չգիտելով զայլոց փախուստն»[51]։ Վարդան Արևելցին ևս հիշատակում է Համիդոլայի դավաճանության մասին[52]։ Այսպիսով, չնայած Կոտմանի ճակատամարտի ընթացքում Վահրամ Գագեցու զորքի ունեցած հաջողությանը, հայ-վրացական բանակը, նրա ձախ թևում կատարված դավաճանության հետևանքով, ծանր պարտություն կրեց[53]։ Դա ավետեց ավելի քան մեկ դար վերելք ապրող վրացական պետության այժմ արդեն սկիզբ առնող անկումը։ Եվ պատահական չէ, որ վրաց պատմիչը գրել է. «սկսվեց բարձր ու անվանի դավթյան հաղթող դրոշի երջանիկ ճակատագրի անկումը»[54]։

Կոտմանի ճակատամարտից հետո մոնղոլներն ասպատակեցին Վահրամյանների տիրույթներն ու Աղվանքի հարուստ քաղաքները, «կողոպտեցին... բոլորը, որ առաջ նրանց կողմից չէր կողոպտվել»[55]։ Մեկ տարի անց՝ 1222 թ. սկզբին, նրանք նորից շարժվեցին վրացական պետության վրա և Վահրամ-

---

50 Մ ա ղ ա ք ի ա արևել., էջ 5—6։ Գրիգոր Ականացին հայ-վրացական զորքի թիվը հաշվում է 60 հազար, իսկ «Վրաց ժամանակագրություններ»՝ արքունի զորքերի թիվը, առանց Իվանե աթաբեկի, Վահրամ Գագեցու ու Շահնշահի զորքերի, 90 հազար (էջ 55), որը չափազանցություն է։ Իրապատում է Գրիգոր Ականացին։

51 Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի, էջ 142։

52 Ի դեպ, Կիրակոս Գանձակեցին ևս հիշատակում է Համիդոլա անունով մի իշխանի (էջ 222), որին Հուսուդան թագուհին (1222—1245) որպես դեսպան ուղարկել էր Բաթու խանի մոտ։ Սա, հավանաբար, վերոհիշյալ Համիդոլան չէ, քանի որ միջնորդել է Բաթու խանի առաջ՝ Իվանե աթաբեկի աղջիկ Թաթմայի տիրույթները նրան վերադարձնելու մասին և այդպես էլ արվել է։ Դժվար թե նա հոգուտ իր թշնամու աղջկա նման քայլ կատարեր։

53 Իբն ալ-Ասիրը (էջ 1։8) հայ-վրացական զորքերի պարտությունը բացատրում է այն քանով, որ նրանք հոգնելով մարտի սկզբում իրենց դեմ եկած Նասիր ադ-Դին Ակ-Կուչի հրոսակների դեմ կռվելիս, այնուհետև չկարողացան դիմագրավել մարտադաշտ մտած մոնղոլական հեծելազորին։

54 «Վրաց ժամանակագրություն», էջ 56։

55 Ի բ ն ա լ-Ա ս ի ր, с. 138.

յանների իշխանությունն ավերելով հասան Խունանի դաշտավայր։ Այդտեղ տեղի ունեցած ճակատամարտում կիրառելով դարանի տակտիկա, մոնղոլները նորից ջախջախեցին հայ-վրացական զորքերին՝ կոտորելով 30 հազար մարդ[56]։ Դրանից հետո մոնղոլներն ավերելով Շամախին, անցան Հյուսիսային Կովկաս, ապա վերադարձան հայրենիք, հաջողությամբ կատարելով իրենց վրա դրված խնդիրները։

Մոնղոլների հետախուզական այս արշավանքը, որն անհամար չարիքներ բերեց Անդրկովկասի ժողովուրդներին, սոսկալի ավերածություններ պատճառեց մասնավորապես Վահրամյանների իշխանությանը, որովհետև այն դարձել էր հայ-վրացական և մոնղոլական բանակների միջև ընթացող պատերազմական գործողությունների թատերաբեմ։ Այդուհանդերձ, ինչպես դիպուկ նկատել է Հ. Մանանդյանը, «մոնղոլների 1220—1223 թթ. վերոհիշյալ արշավանքը նախերգանքն էր նոր և ավելի աղետալի փորձանքների, որոնց ենթարկվելու էին Վրաստանն ու Հայաստանը և սրանց հարևան երկրները»[57]։ Վրացական թագավորությունը դեռ ուշքի չէր եկել մոնղոլների հարվածներից, երբ իր զորքերով Անդրկովկաս ներխուժեց խորեզմշահ Մուհամմադի որդի Ջալալ էդ-Դինը, նպատակ հետապնդելով տեղի և հարավային Ադրբեջանի ուժերից հակամոնղոլական ճակատ ստեղծել։ Սակայն ապագան ցույց տվեց, որ նա իր անխոհեմ և մահմեդական ֆանատիզմով ուղեկցվող ավազակաբարո գործունեությամբ լոկ պարարտ հող ստեղծեց թե՛ իր անփառունակ կործանման, թե՛ այդ շրջանները հետագայում մոնղոլների կողմից դյուրին նվաճվելու համար։ Ի դեպ, մոնղոլները, իրենց հերթին, ջախջախելով Անդրկովկասի դիմադրողական ուժերը, դյուրացրել էին Ջալալ էդ-Դինի կողմից այդ երկրամասի նվաճումը։ Ադրբեջանին տիրելու համար նա իրավական հիմք դարձրեց Ուզբեկի՝ իր հորից ունեցած վասալական կախումը, ապա 1225 թ. արշավեց վրացական պետության վրա և նույն թվականի սեպտեմբերի կեսերին Գառնիի մոտ ջախջախեց Իվանե աթաբեկի գլխավորած հայ-վրացական զորքերին։ Այդ ճակատամարտին, ըստ երևույթին, Վահրամ Գագեցին իր զորքերով չէր մասնակցել, չնայած, համաձայն «Վրաց ժամանակագրության», նա էր Իվանե աթաբեկի հետ միասին Ռուսուդան թագուհուն՝ 1222 թ. վախճանված Գեորգի Լաշայի քրոջը, տեղեկացրել «խորեզմացիների և անձամբ մեծն սուլթան Ջալալեդդինի գալը՝ կոտորելու և ջնջելու քրիստոնյաներին»[59]։ Այս ճակատամարտից հետո Ջալալ էդ-Դինը սկսեց ասպատակել Հյուսիսային Հայաստանն ու Արևելյան Վրաստանը։ Նա «ավերեց Դվինի ամբողջ երկիրը, Դվինի քուստը, ողջ Անին, Սոմխիթը, Գագը՝ մինչև Գանձակ, Շամքորը։ Մինչ այդ Շամքորն ու մերձակա երկրները պատկանում էին Վահրամ Գագեցուն՝ խելամիտ ու արշավանքներում նշանավոր մարդուն[60]։ Այ-

56 Рашид ад-Дин, т. I, кн. II, с. 228, Կիրակոս Գանձակեցի, էջ 203։

57 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 187։

58 Կիրակոս Գանձակեցի, էջ 225, Մխիթար Այրիվանեցի, էջ 66, «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 339, «Վրաց ժամանակագրություն», էջ 60—61, Ибн ал-Асир, с. 156—157 և ուրիշներ։

59 «Վրաց ժամանակագրություն», էջ 62—64։

60 Նույն տեղում, էջ 62։

Նուհետև Ջալալ էդ-Դինն արշավեց դեպի Տփխիս և գրավեց այն։ Համաձայն Վարդան Արևելցու, Գագի դաշտավայրով, այսինքն՝ Վահրամյանների իշխանության վրայով, կատարված այդ արշավանքը տեղի է ունեցել Գառնիի ճակատամարտից «գկնի ամի միոյ»[61]։ Այդ ընթացքում Վահրամյանների իշխանությունը ոչ միայն ավերվեց ու կողոպտվեց, այլև մասնատվեց, որովհետև, ան-Նասիվու վկայությամբ, Ջալալ էդ-Դինը Շամքորը Վահրամ Գագեցուց խլելով, Գանձակի, Բայլականի, Բարդայի և Շատուրի հետ միասին հանձնեց իր մերձավորներից էմիր Ուր-խանին (ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Օրղան)[62] ի տիրապետություն[63]։ Չհամաձայնելով Շամքորը կորցնելու մտքի հետ և օգտվելով Ջալալ էդ-Դինի բացակայությունից (վերջինս գտնվում էր Իրաքում), Վահրամ Գագեցին 1227 թ. մի քանի հաջող հարձակումներ է գործում Ուր-խանի տիրույթների վրա։ Համաձայն այդ իրադարձությունների ականատես և ականջալուր ան-Նասիվու, 1228 թ., «երբ սուլթանը (Ջալալ էդ-Դինը— Ա. Շ.) վերադարձավ, Վահրամի վրա շատ բողոքներ կուտակվեցին։ Սուլթանը շարժվեց նրա վրա մեծ ուժերով և բյուր զինվորներով։ Զորքերը վրաններով և գումակներով սփռվեցին Վահրամի մարզի տարբեր տեղերում, կողոպտելով այն, վառելով, սպանելով և քշելով [բնակիչներին]։ Զորքերը խլեցին նրանցից այն ամենը, ինչ թաքցված և ծածկված էր, նրանց նետելով սարերի գագաթներից և լեռնային բարձրունքներից։ Սուլթանը գնաց Շաքքան բերդի վրա, վերցրեց այն շնորհիվ ուժի ու կարողության և վառեց նրա պաշտպաններին կրակով։ Այնուհետև նա այդտեղից գնաց դեպի Թաթմա թագուհուն պատկանող Ալիաբադ բերդը։ Նա արագորեն վերցրեց բերդը, ճնշեց նրա ուժերը, կոտորեց նրա բնակիչներին և արեց այնտեղ այն, ինչ ուզում էր։ Այնուհետև նա գնաց դեպի Գագ և Քավազին բերդերը և դրանք երեք ամիս պաշարեց. վրացիների դրությունը դարձավ դժվարին, և նրանք որոշակի գումարի [փրկագնի] միջոցով խաղաղություն խնդրեցին, որը նրանք խոստանում էին անմիջապես վճարել։ Այդ առթիվ միջնորդները բանակցություններ վարեցին, այնուհետև փողերը տրվեցին և [սուլթանը] շարժվեց, որպեսզի սկսի ոլաթի պաշարումը»[64]։ Վահրամյանների իշխանության համար չափազանց ծանր հետևանքներ ունեցած այս արշավանքի մասին, որի ընթացքում է, մեր խորին համոզմամբ, «ի Ջալալադին սուլթանին հինից»[65] ավերվել Խորանաշատի վանքը, գրել են նաև ալ-Այնին[66] ու Իբն-Խալդունը[67]։

Ուշագրավ է, որ վերջինս ան-Նասիվուն համառոտ կրկնելով հանդերձ, նշում է, որ Քավազին բերդը պաշարելու համար Ջալալ էդ-Դինն ուղարկել էր

---

61 Վարդան Արևելցի, էջ 143։

62 Կիրակոս Գանձակեցի, էջ 226։

63 ан-Насиви, с. 163.

64 Նույն տեղում, էջ 226։

65 Կիրակոս Գանձակեցի, էջ 244։

66 Ленинградское отделение Института востоковедения АН СССР, рукопись С 350, л. 26а.

67 ابن خلدون، العبر و الديوان المبتدا و الخبر، مجلد ٥، بيروت ١٩٥٩، ص٢٩٦

իր վեգիրին՝ Շարաֆ ալ-Մուլքին[68]։ Այս հանգամանքը հիմք է տալիս պնդելու, որ XIV դ. երկրորդ կեսին ապրած և 1405 թ. մահացած Իբն-Խալդունն օգտվել է այս իրադարձություններն արձանագրած մի այլ աղբյուրից, քանի որ ալ-Այնին ոչինչ չի ավելացնում ան-Նասիվու պատմածին։ Մնում է միայն զարմանալ, թե ինչու ժամանակի հայ-վրացական աղբյուրները գոնե որևէ ակնարկ չեն անում Վահրամյանների իշխանության վրա Ջալալ էդ-Դինի ձեռնարկած այս պատժիչ արշավանքի մասին։

Ջալալ էդ-Դինի կողմից Տփխիսը գրավվելուց հետո վրաց արքունիքը, որի գլուխ կանգնած էր Քութաիսում ապաստանած Ռուսուդան թագուհին, փաստորեն ոչինչ չէր անում թշնամուն կազմակերպված հակահարված տալու համար, իսկ առանձին իշխանների ելույթներն էլ, բնականաբար, հաջողության հասնել չէին կարող, ինչպես դա երևաց Վահրամ Գագեցու օրինակով։ Ավելին, դրանք ծանր հետևանքներ էին ունենում փաստորեն անպաշտպան բնակչության համար։ Այս իրավիճակին վերջ տրվեց 1231 թ. օգոստոսին, երբ Ջալալ էդ-Դինի հրոսակախմբերի մնացորդներին մոնղոլները Մայաֆարկինի մոտ ջախջախեցին, իսկ ինքն էլ Այն-բար գյուղի մոտ սպանվեց ինչ-որ քրդի կողմից[69]։ Միայն դրանից հետո է, որ վրացական պետությունը առժամանակ մի փոքր շունչ առավ, իսկ Վահրամ Գագեցին Շամքորը կրկին միացրեց իր տիրույթներին։ Ամենայն հավանականությամբ, այս հանգամանքը նկատի ունի Կիրակոս Գանձակեցին, երբ, նկարագրելով մոնղոլական երկրորդ արշավանքի ժամանակ Շամքորի գրավումը, նշում է, թե «իսկ քաղաքն (Շամքորը— Ա. Շ.) յայնժամ էր ընդ իշխանութեամբ Վահրամայ և որդւոյ իւրոյ Աղբուղային, զոր առեալ էին յառաջագոյն ի պարսկաց»[70]։

Այսպիսով, ինչպես տեսանք, XIII դ. առաջին երկու տասնամյակների ընթացքում վերելք ապրող և շարունակ հզորացող Վահրամյանների իշխանությունը 1220-ական թվականներից սկսած բռնեց թուլացման ուղին։ Դա պայմանավորված էր մոնղոլական արշավանքով և Ջալալ էդ-Դինի նվաճումներով, որոնց ընթացքում Վահրամյանների իշխանությունն իր դիրքի պատճառով տառացիորեն ոտնատակ տրվեց թե՛ մոնղոլական և թե Ջալալ էդ-Դինի զորքերի կողմից։ Եվ ամենևին պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ այդ ընթացքում մոնղոլների ու խորեզմյան հրոսակախմբերի դեմ մեծ եռանդով պայքարած Վահրամ Գագեցին, որի զորքը «բնականաբար կազմված կլիներ գարդմանցիներից, քարհերձցիներից, երգևանցիներից, տավուշցիներից, կածարեթցիներից, տերունականցիներից, գագեցիներից և այլն, մի խոսքով հիմնականում հայերից»[71], մի քանի տարի անց՝ մոնղոլների երկրորդ արշավանքի ժամանակ, նրանց դիմադրելու և ոչ մի քայլ չկատարեց ու հպատակվեց նրանց։

---

68 Նույն տեղում։

69 ан-Насиви, с. 294 и сл.

70 Կիրակոս Գանձակեցի, էջ 242։

71 «Վրաց ժամանակագրություն», էջ 31։

КНЯЖЕСТВО ВАГРАМИДОВ В ПЕРИОД РАЗВЕДЫВАТЕЛЬНОГО ПОХОДА МОНГОЛОВ И ЗАВОЕВАНИЙ ДЖАЛАЛ ЭД-ДИНА

АРТАШЕС ШАХНАЗАРЯН

Резюме

В конце XII—начале XIII вв. на значительной части территории областей Тавуш, Гардман, Парисос и Шакашен Исторической Армении образовалось княжество Ваграмидов, достигшее в конце 1210-х годов апогея своего могущества. Этому во многом способствовало освобождение в 1216/1217 г. г. Шамкор ваграмидским князем Ваграмом Гагеци от сельджуков. Однако разведывательный поход монголов (1220—1223) и завоевания Джалал эд-Дина (1225—1231), сопровождавшиеся разорением и опустошением особенно княжества Ваграмидов, привели к сильному ослаблению этого некогда могущественного княжества. Этим, в частности, объясняется то, что князь Ваграм Гагеци, развернувший в рассматриваемый период активную борьбу против иноземных захватчиков, в скором времени без всякого сопротивления признал монгольское владычество.